



# ԵՐԵՎԱՆԻ ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ և ԿԵՂՏԱՋՐԵՐԻ ՑԱՆՑԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԳՈՐԾԵԼԻՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

## ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 4: ԽՄԵԼՈՒ ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՑԱՆՑԻ ԿԵՂՏԱՋՐԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԿՈԼԵԿՏՈՐՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ

**Երկիր** Հայաստանի Հանրապետություն  
**Պատվիրատու** SOGREAH Consultants  
**Ժամկետ** Հուլիս 2010թ. – Օգոստոս 2011թ.

### Ծրագրի և կատարված ծառայության համառոտ նկարագիր

Ծրագրի շրջանակներում կատարվել է Երևան քաղաքի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի ուսումնասիրություն, նրանց առանձին հատվածների և հանգույցների տեխնիկական վիճակի պարզաբանման, վերականգնման ու զարգացման կարիքների բացահայտման ու գնահատման նպատակով: Մասնավորապես.



- Կատարվել են Երևան Ջուր ընկերության ենթակայության ջրամատակարարման ներքաղաքային բաշխիչ ցանցի և կեղտաջրերի հեռացման հիմնական կոլեկտորների դաշտային գործիքային ուսումնասիրություններ, տվյալների հավաքագրում, գույքագրում, գլխավոր հատակագծերի թարմացում: Ջրամատակարարման բաշխիչ ցանցի բնորոշ կետերում կատարվել են էլքերի և ճնշումների չափումներ:
- Արդյունքների հիման վրա կատարվել է քաղաքի բաշխիչ ցանցի հիդրավիկ մոդելի թարմացում,
- Կազմվել է ՋնՋ համակարգերի բարելավմանն ուղղված միջոցառումների ցանկ և կատարվել դրանց ներդրումային գնահատում,
- Մշակվել է առաջնահերթ վերակառուցման ու բարելավման միջոցառումների առաջարկություն, որը ներառում է.
  - խմելու ջրի խողովակաշարերի վերանորոգում (43.08 կմ)
  - խմելու ջրի ցանցի ընդլայնում (19.73 կմ)
  - մասնավոր տների մուտքագծերի վերակառուցում (10,000 միացում)
  - վթարված կոյուղու կոլեկտորների վերանորոգում (10.58 կմ)
- Կատարվել է բնապահպանական ու սոցիալական նախնական գնահատում, որը ներառել է ծրագրի դրական և բացասական ազդեցությունը ջրային ռեսուրսների ու ջրային օբյեկտների, հողային ռեսուրսների, սննդային անվտանգության և մարդու առողջության վրա:
  - Մշակվել է շրջակա միջավայրի կառավարման պլան, որը ներառում է հիմնական 3 փուլ.
    - Մեղմացման միջոցառումների ներկայացում,
    - Մոնիտորինգ և գնահատում,
    - Պլանի վերանայում՝ հիմնված մոնիտորինգի և գնահատման արդյունքների վրա:
  - Ծրագրի շրջանակներում իրականացվել է նաև սոցիալական հետազոտություններ՝ ազդակիր համայնքներում: Առաջարկված ներդրումային ծրագրերը քննարկվել և հավանության են արժանացել Երևան Ջուր ՓԲԸ-ի կողմից: Ուսումնասիրությունները հիմք կծառայեն Երևան քաղաքի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի բարելավման գործընթացի իրականացման համար:



**Օրագրի նպատակը**

Երևան քաղաքի ջրամատակարարման համակարգի բարելավում, ճնշումների կարգավորում, հոսակորուստների կրճատում, ջրամատակարարման տևողության ավելացում, հուսալիության մակարդակի բարձրացում, ինչպես նաև ջրահեռացման համակարգի բարելավում՝ քաղաքի սանիտարական վիճակի և Հրազդան գետի էկոլոգիական վիճակի բարելավում:

